C. E. P. F. A.

ՖՐՄՈՒԿՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ No. 31

25.02.2026



ETF-ի FormA. ձևավորող գնահատման հմտություններ դասավանդողների համար

Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում տեղի ունեցավ Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) FormA եռօրյա վերապատրաստման ծրագիրը, որը նախատեսված էր միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդողների և ղեկավարների համար: Ծրագրի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, ԵԿՀ մարդկային կապիտալի զարգացման ավագ փորձագետ Թամար Կիտաշվիլին, նորարարական դասավանդման և ուսուցման համակարգող Օլենա Բեխը, ձևավորող գնահատման փորձագետ-վերապատրաստող Աննա Ալեքսանյանը և ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանը:





Դասընթացի նպատակն է զարգացնել ՄԿՈՒ ոլորտի դասավանդողների մասնագիտական կարողությունները՝ ձևավորող գնահատման արդյունավետ կիրառման, սովորողների ուսումնառության առաջընթացի գնահատման և որակյալ հետադարձ կապի տրամադրման ուղղությամբ:

ՍԵՊՖԱ-ի ներկայացուցիչները՝ ETF-ի FormA վերապատրաստմանը

ՍԵՊՖԱ-ի տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Ելենա Մարտիրոսյանը, կրթության որակի պատասխանատու Աիդա Դաբաղյանը և «Հայոց լեզու» ու «Գրականություն» առարկաների դասախոս, Կարիերայի կենտրոնի պատասխանատու Անուշ Ստեփանյանը մասնակցեցին Եվրոպական կրթական հիմնադրամի ԵԿՀ FormA եռօրյա վերապատրաստման ծրագրին:

Վերապատրաստման նպատակն էր հարմարեցնել եվրոպական FormA գործիքակազմը Հայաստանի համատեքստին և



նպաստել միջին ՄԿՈՒ ոլորտում ձևավորող գնահատման արդյունավետ կիրառմանը: Ծրագրի ընթացքում մասնակիցները ծանոթացան ձևավորող գնահատման ժամանակակից մոտեցումներին, գործնական մեթոդներին և գնահատման այնպիսի գործիքների կիրառմանը, որոնք նպաստում են սովորողների ուսումնառության շարունակական աջակցությանը, արդյունավետ հետադարձ կապի ապահովմանը և ուսումնառության արդյունքների բարելավմանը:

Vickino Day. ՍԵՊՖԱ-ն՝ առողջապահական նորարարությունների համաժողովում



Հայաստանում կայացավ Vickino Day առողջապահական նորարարությունների առաջին համաժողովը, որը համախմբել էր առողջապահության, տեխնոլոգիաների և կրթության ոլորտների ներկայացուցիչներին՝ քննարկելու զարգացման միտումները, թվայնացման հնարավորությունները և համագործակցության նոր ձևաչափերը: Համաժողովին որպես խոսնակ հանդես եկավ ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանը՝ ներկայացնելով Էրազմուս+ IMPROVET_AM ծրագրի աշխատանքային փաթեթները և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության նոր մոդուլները: Նա անդրադարձավ թվային տեխնոլոգիաների, 3D մոդելավորման, CAD/CAM համակարգերի կիրառմանը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական հմտությունների ձևավորմանը:



Համաժողովին մասնակցում էր նաև ՍԵՊՖԱ-ի «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության դասախոս Լիլիթ Պապյանը:

ՍԵՊՖԱ-ի ներկայացուցիչները՝ Էրազմուս+ ELE_VET ծրագրում

Էրազմուս+ ELE_VET ծրագրի շրջանակում հունվարի 26–30-ը ՍԵՊՖԱ-ի տնօրենի



ՈւԱԳ տեղակալ Ելենա Մարտիրոսյանը և դասախոսներ Անի Հարությունյանն ու Ռոզա Ավագյանը մասնակցեցին Իտալիայում անցկացված Training of Trainers միջազգային վերապատրաստմանը: Ծրագիրը միտված էր զարգացնելու դասավանդողների թվային հմտությունները, ձեռնարկատիրական մտածողությունը և նորարարական ուսուցման մեթոդները:

Ստացված փորձը կնպաստի ՍԵՊՖԱ-ում ժամանակակից, ուսանողակենտրոն և աշխատաշուկային համապատասխան կրթական մոտեցումների ներդրմանը:



Վերապատրաստման շրջանակում մասնակիցներն այցելեցին նաև Իտալիայի Պերուջիա քաղաք, ինչը նպաստեց միջմշակութային երկխոսությանն ու մասնագիտական կապերի ամրապնդմանը:

Էրազմուս+ IMPROVET_AM. համագործակցության նոր հնարավորություններ

Էրազմուս+ IMPROVET_AM ծրագրի շրջանակում ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանը և կրթության որակի պատասխանատու Աիդա Դաբաղյանը մասնակցեցին Իտալիայի Ալբա քաղաքում՝ ԱՊՐՈ Ֆորմացիոնե ուսումնական



կենտրոնում անցկացված ծրագրի 3-րդ առկա միջազգային հանդիպմանը, որի ընթացքում ներկայացվեցին ծրագրի իրականացված գործողություններն ու ձեռքբերումները, քննարկվեցին նաև դրանց շարունակականության ապահովման և գործընկերային համագործակցության հետագա հնարավորությունները:

Հանդիպմանը մասնակցում էին նաև ԵԿՀ Հայաստանի հետ կապերի համակարգող Քրիստինա Բուրջիոն և Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն Տիգրան Թադևոսյանը:



Միջազգային համագործակցության նոր քայլեր

ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանը և Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն Տիգրան Թադևոսյանը այցելեցին Իտալիայի Կոմո քաղաքում գտնվող Cometa Formazione ուսումնական կենտրոն: Այցի ընթացքում նրանք հանդիպեցին կենտրոնի գլխավոր տնօրեն Ալեսանդրո Մելեին և միջազգային կապերի բաժնի ղեկավար Թերեզա Սալվինոյին, ծանոթացան կենտրոնի գործունեությանը և քննարկեցին հետագա համագործակցության հնարավորությունները:



ՍԵՊՖԱ-ի տնօրենը աշխատանքային այցով Լայպցիգում էր

ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանն աշխատանքային այցով գտնվեց Գերմանիայի Լայպցիգ քաղաքում՝ ծանոթանալու Ruth-Pfau-Schule մասնագիտական ուսումնական կենտրոնի կրթական ծրագրերին:

Այցի ընթացքում նա հանդիպեց կենտրոնի տնօրեն Յանա Բեքերին, անձնակազմին, ինչպես նաև Լայպցիգի քաղաքապետարանի և Սաքսոնիայում ՀՀ պատվավոր հյուպատոսության ներկայացուցիչներին: Քննարկվեցին համագործակցության ընդլայնման



հնարավորությունները, մասնավորապես՝ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության զարգացման ուղղությամբ, ինչպես նաև ներկայացվեցին Էրազմուս+ IMPROVET_AM ծրագրի արդյունքները և հետագա համագործակցության հեռանկարները:

Միջազգային հանդիպում Իտալիայում

ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանը Իտալիայի Տրենտո քաղաքում մասնակցել է «EfVET Internationalisation & Learning» թեմատիկ թիմի շրջանակում կազմակերպված միջազգային հանդիպմանը, որի օրա-



կարգում էին շարժունակության որակի վերաբերյալ աշխատաբաններ, Էրազմուս+ ծրագրերի (KA1 և KA2) շուրջ քննարկումներ, նախագծային աշխատանք, ինչպես նաև փորձի փոխանակման և գործնական կիրառությունից դեպի քաղաքականություն անցման թեմաներով ելույթներ:

MOSAIC CoVE ծրագրի ներկայացումը նպատակ ուներ զարգացնել մասնագիտական կրթության գերազանցության կենտրոնների համագործակցությունը և ամրապնդել կրթություն-աշխատաշուկա կապը:

Հյուրընկալեցինք Ֆրանսիայի Սենատի պատվիրակությանը

Ֆրանսիայի Սենատի Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի նախագահ Ժիլբեր Լյուկ Դրվինազի գլխավորած պատվիրակությունն այցելեց ՍԵՊՖԱ: Հյուրերը ծանոթացան հաստատության կրթական ծրա-



գրերին, նյութատեխնիկական բազային և ուսանողների համար ստեղծված հնարավորություններին: Այցի ընթացքում ներկայացվեցին նաև հիմնադրամի գործունեության հիմնական ուղղությունները և միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերը:

ՍԵՊՖԱ-ն՝ նախագահական միջոցառմանը

Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Էմանուել Մակրոնի Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակում ՍԵՊՖԱ-ի խոհարարական



և հրուշակագործության թիմերը կազմակերպեցին Հայաստանի Ազգային պատկերասրահում նախագահի և ֆրանսիական համայնքի հանդիպման ընթացքում մատուցված պաշտոնական հյուրասիրությունը:
Հպարտ ենք, որ մեր ուսանողներին վստահվել էր այս կարևոր և պատասխանատու առաքելությունը, և շնորհակալություն ենք հայտնում Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատանը ցուցաբերած վստահության համար:

Վարպետաց դասեր իտալացի հյուրերի համար

Erasmus+ KA1 ծրագրի շրջանակում Հայաստան էին այցելել իտալական EGInA կազմակերպության անդամ կրթության ոլորտի փորձագետներ, ՄԿՈՒՀ հաստատությունների տնօրեններ և դասավանդողներ,



ովքեր այցելեցին ՍԵՊՖԱ՝ փորձի փոխանակման և հաստատության գործունեությանը ծանոթանալու նպատակով:
Հյուրերը մասնակցեցին ուսանողների կողմից կազմակերպված վարպետաց դասերի, ծանոթացան կրթական ծրագրերին և քննարկեցին համատեղ նախաձեռնությունների իրականացման հեռանկարները:



Միջազգային երկխոսություն՝ կրթության շուրջ

Կրթության միջազգային օրվան ընդառաջ ՍԵՊՖԱ-ի ուսանողները մասնակցեցին Mix-Up առցանց հարթակում կազմակերպված միջազգային քննարկմանը՝ տարբեր երկրների մասնագիտական կրթության հաստատությունների ուսանողների հետ: Քննարկման ընթացքում նրանք կարծիքներ փոխանակեցին կրթության արդիական թեմաների շուրջ՝ անդրադառնալով հավասար կրթության հնարավորություններին, գործնական հմտությունների ուսուցմանը, բուլլինգի կանխարգելմանը, սեռական կրթությանը և սոցալապես խոցելի շրջաններում աշխատող ուսուցիչների աջակցության հարցերին:

Նոր գիտելիքներ և հմտություններ ատամնատեխնիկական ոլորտում

ՍԵՊՖԱ-ի ատամնատեխնիկական թիմը հյուրընկալեց օրթոդոնտիկ ապարատների պատրաստման ոլորտի մասնագետ, «OrthoLab» ընկերության տնօրեն Ռազմիկ Դիրաբյանին:

Հանդիպման ընթացքում ուսանողները ծանոթացան օրթոդոնտիկ սարքերի տեսակներին, պատրաստման ժամանակակից տեխնոլոգիաներին և կիրառվող նյութերին: Կազմակերպվեց նաև համակցված տեսագործնական դասընթաց, որի ընթացքում ուսանողները հնարավորություն ունեցան կիրառելու ստացած գիտելիքները և մասնակցելու սարքերի պատրաստման գործընթացին:



ՍԵՊՖԱ-ում Բաց դռների օր էր

ՍԵՊՖԱ-ն հյուրընկալեց Լեռնանցք գյուղի (Սպիտակ) Մեսրոպ Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցի և Անատոլ Ֆրանսի անվան ֆրանսիական դպրոցի աշակերտներին, ուսուցիչներին և վարչական կազմի ներկայացուցիչներին: Հյուրերը ծանոթացան ՍԵՊՖԱ-ի մասնագիտություններին, կրթական հնարավորություններին և աշխատաշուկայում ներգրավվելու հեռանկարներին: Նրանք շրջեցին լսարաններով և լաբորատորիաներով, շփվեցին դասախոսների ու ուսանողների հետ, մասնակցեցին մասնագիտական կողմնորոշմանն ուղղված քննարկումների և փորձի փոխանակման:



Նման հանդիպումները նպաստում են կրթական համագործակցության զարգացմանը և օգնում երիտասարդներին կատարել գիտակցված մասնագիտական ընտրություն:

Մասնագիտական փորձի փոխանակում՝ կարի ոլորտում

Միջքոլեջային համագործակցության շրջանակում ՍԵՊՖԱ-ի «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողները այցելեցին Երևանի թիվ 1 արհեստագործական ուսումնարան և մասնակցեցին ցուցադրական դասի: Դասի ընթացքում ներկայացվեցին էսքիզավորման, վերնաշապիկի հիմքի գծագրի կառուցման և մոդելավորման թեմաները: Այցը հնարավորություն տվեց ուսանողներին ընդլայնելու մասնագիտական գիտելիքները և ծանոթանալու ոլորտի գործնական մոտեցումներին:



Գիրքը՝ գիտելիքի և քննարկման աղբյուր

Գրքի օրվա շրջանակում ՍԵՊՖԱ-ում «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության 1-ին և 3-րդ կուրսերի ուսանողների համար կազմակերպվեց դաս-քննարկում՝ նվիրված գրքի կարևորությանը և գրադարանից արդյունավետ օգտվելու հմտություններին: Ուսանողները քննարկեցին նաև ֆիլմ–գիրք փոխհարաբերությունը, ընթերցեցին և վերլուծեցին Հովհաննես Թումանյանի քառյակները: Քննարկմանը մասնակցեցին նաև Ուսանողական խորհրդի ներկայացուցիչները:



Հանդիպման ավարտին Ռեսուրս կենտրոնի պատասխանատու Հերմինե Սարգսյանը ներկայացրեց կենտրոնի գրքային ռեսուրսներն ու դրանց արդյունավետ օգտագործման հնարավորությունները: